Ղազարոս Աղայան

Հարկավոր է օգնել չքավորներին

Անուշիկ գարնան զվարթ օրերում
Գրավեցին իմ սիրտ ծաղկազարդ վայրեր,
Նաև միտքս ընկան էնտեղի եղբարքս,
Կամեցա գնալ մենակ, անընկեր:
Մնաս բարյավ ասի բազմամարդ տեղին,
Սկսա շրջիլ ազատ հովերում,
Ելա մի բարձր բլուրի վերա
Դիտել, թե՝ ինչ կան նորա չորս կողմում:
Իսկույն երևցան աչքիս առաջև
Կանաչած, ծաղկած, ընդարձակ դաշտեր,
Շենք և շինություն, մարդիք, անասունք,
Առուք և վտակք, սրընթաց գետեր:Հայ կանայք բոկոտն՝ սուր-սուր քարերում
Մանգալիս տեսա, սիրտս, հոգիս թնդաց.
Տեսնում եմ շատ բան, բայց լուռ անցկենում:
Անցկացա, եկի իմ խեղճ բնակարան,
Տեսածիս վերա սկսա մտածել,
Թե ի՞նչ միջոցով կարող են արդյոք
Ազգասեր անձինքն այն որբոց օգնել,
Ո՛չ դրամ, ո՛չ նյութ, չէ ինչ հարկավոր,
Միայն թե տեսնեն քննեն, իմանան,
Թե ի՞նչ է պատճառն, որ նրանք աղքատ,
Կարոտ են մնում արհեստի, ուսման:
Եկեք, իմ եղբարք, որդիք արամյան,

Միմյանց անխտիր կերպով մենք օգնենք,
Թե՛ քաղաքացի և թե՛ շինական
Նոր հոգի առած՝ իրարու զգվենք:
Լցված ցնծությամբ իջա վերևից,
Զբոսնում էի նորա ստորոտում,
Էսքան բարձրության վայելողների
Տեսությանն էի միայն փափագում:
Հանկարծ մի ծեր մարդ տեսա առաջիս,
Որ ման էր գալիս գլուխը քաշ գցած.
Ուներ նա հագին հին, մաշված շորեր
Եվ իրա ձեռքին գավազան բռնած:
Մոտեցա նորան և բարովեցի,
Նա էլ քաղցր խոսքով բարևս կրկնեց,
Տեսա, որ հայ է, շատ ուրախացա,
Նա էլ հրճվանքով հոր պես ինձ զգվեց:
Ինձանից հարցրուց, թե ի՞նչ պատճառով
Ես ման եմ գալի սար ու ձոր ընկած,
Պատասխան տվի, թե ծեր տեսության
Կարոտը բերավ, որով եմ էրված:
«Հայրիկ, ասացի, ասա ինձ խնդրեմ,
Ինչպե՞ս եք այստեղ դուք կառավարվում,
Ունի՞ք կայք, կալված և հանգիստ կենցաղ,
Թե՞ միշտ եք այդպես ստոր վիճակում»:
Գլուխը շարժեց ծերունին տխուր:
« Ցավ է ինձ ասել, ասաց նա լալով,
Ահա անցանեն իմ կյանքի օրեր,
Բոլորն էլ սրտիս ցավ ու վիշտ տալով:
Տեսնո՞ւմ ես դու այդ սիրուն դաշտերը,
Որոնք գրավում են շատերի հոգին,
Չկարծես, թե դրանց մենք ենք վայելում,
Այլ մեր ոսոխներն ու մեր թշնամին:
Իսկ մենք այս փոքրիկ տեղումը սխմված
Մնացել ենք անշարժ-տխուր վիճակում.

Արհեստ, գիր, լեզու, օրենք ասած բանդ
Չգիտենք թե ինչ են նշանակում:
Թե կամիս բոլոր մեր պակասության
Եվ մեր նեղության դառն պատճառներն
Իմանալ, որդյակ, այդ դժվարին է,
Վասն զի լուռ են մեր լեզուներն»:
Լռեց ծերունին, ցողաց արտասուքն,
Տխրության ամպը աչքունքը պատեց՝
Ես էլ մնացի նրա մոտ շվարած,
Ըստ որում սրտիս մեծ ցավ պատճառեց:
Եվ համբուրելով ծերունվո աչը,
Դարձա այնտեղից դեպի մյուս գյուղեր.
Բոլոր փորձանքներն աչքիս տակն առած,
Ընկա մեմածեծ սարեր ու ձորեր:
Ինչե՞ր եմ տեսնում, ո՞վ կարե պատմել,
Հայ կանայք բոկոտն՝ սուր-սուր քարերում
Մանգալիս տեսա, սիրտս, հոգիս թնդաց.
Տեսնում եմ շատ բան, բայց լուռ անցկենում:
Անցկացա, եկի իմ խեղճ բնակարան,
Տեսածիս վերա սկսա մտածել,
Թե ի՞նչ միջոցով կարող են արդյոք
Ազգասեր անձինքն այն որբոց օգնել,
Ո՛չ դրամ, ո՛չ նյութ, չէ ինչ հարկավոր,
Միայն թե տեսնեն քննեն, իմանան,
Թե ի՞նչ է պատճառն, որ նրանք աղքատ,
Կարոտ են մնում արհեստի, ուսման:
Եկեք, իմ եղբարք, որդիք արամյան,
Միմյանց անխտիր կերպով մենք օգնենք,
Թե՛ քաղաքացի և թե՛ շինական
Նոր հոգի առած՝ իրարու զգվենք:

1862